Հաստատված
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի
27.09.2024թ. № 270924 որոշմամբ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Կարգավորման առարկան

1. «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամների վարքագծի կանոնների (այսուհետ՝ կանոններ) նպատակն է սահմանել «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) խորհրդի անդամների (այսուհետ՝ Խորհրդի անդամ), այդ թվում՝ Խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատարների վարքագծի կանոններին ներկայացվող պահանջները:

2. Վարքագծի ընդհանուր կանոններ

2. Խորհրդի անդամները պետք է պահպանեն բարեխղճություն և էթիկայի բարձր չափանիշ: Խորհրդի անդամների անձնական և մասնագիտական վարքագիծը ցանկացած իրավիճակում պետք է առաջացնի հարգանք և վստահություն, և խթանի ընկերության պատշաճ կառավարումը:

3. Խորհրդի անդամների պարտականությունները

3. Խորհրդի անդամները իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս, պետք է առաջնորդվեն ընկերության նպատակներով և շահերով:

4. Խորհրդի անդամները պետք է ընկերության գործունեությանը բավականաչափ ժամանակ հատկացնեն՝ ելնելով ընկերության շահերից:

5. Խորհրդի անդամները պետք է ձեռնպահ մնան ընկերության աշխատակիցների վրա ոչ իրավաչափ ազդեցությունից, հաշվի առնելով այն, որ աշխատակիցները իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս ենթարկվում են ընկերությանը: Ոչ իրավաչափ ազդեցությունը է համարվում՝ պաշտոնական դիրքի օգտագործմամբ

աշխատակցին պարտավորեցնելը կատարել ընկերության ներքին իրավական ակտերին և ընկերության շահերին հակասող գործողություններ:

6. Խորհրդի անդամները պետք է այնպես կատարեն իրենց աշխատանքային պարտականությունները որպեսզի դա նպաստի ընկերության և իրենց նկատմամբ հանրային վստահության պահպանմանը և բարձրացմանը:

7. Խորհրդի անդամները պետք է պահպանեն ընկերությանը վերաբերող տեղեկատվության գաղտնիությունը թե՛ պաշտոնավարման ընթացքում և թե՛ դրա ավարտից հետո:

4. Շահերի բախում

8. Սույն կանոնների շրջանակում շահերի բախում է համարվում դեպքերի կամ իրավիճակների համակցումը, երբ Խորհրդի անդամների անձնական շահերն ազդում են կամ կարող են ազդել աշխատանքային պարտականությունների օբյեկտիվ և անկողմնակալ կատարման վրա: Անձնական շահ է համարվում ցանկացած օգուտ, որը Խորհրդի անդամը կարող է ստանալ իր, իր բարեկամների կամ այլ շահագրգիռ անձանց համար:

9. Խորհրդի անդամը պետք է խուսափի իրավիճակներից, որտեղ առկա է կամ կարող է առաջանալ շահերի բախում:

10. Շահերի բախում առաջանալու դեպքում Խորհրդի անդամը պետք է հրաժարվի տվյալ հարցի դիտարկմանը մասնակցելուց և դրա մասին հայտնի ընկերության կորպորատիվ քարտուղարին:

11. Շահերի բախման առաջանալու կասկածի առկայության դեպքում Խորհրդի անդամը կարող է դիմել ընկերության կորպորատիվ քարտուղարին՝ խորհրդատվության համար:

5. Աշխատանքը Ընկերությունից դուրս

12. Խորհրդի անդամներն ընկերությունից դուրս կարող են զբաղվել այլ աշխատանքով, այդ թվում՝ անհատական աշխատանքային գործունեությամբ, ինչպես նաև այլ ընկերություններին ծառայությունների մատուցմամբ, նախապես տեղեկացնելով ընկերությանը, պայմանով, որ ընկերությունից դուրս աշխատանքը համատեղելի է Խորհրդի անդամի պարտավորությունների հետ և չի առաջացնում շահերի բախում:

13. Ընկերությունից դուրս չվարձատրվող հանրային աշխատանք, ոչ աշխատանքային ժամերին բարեգործական գործունեություն, կրթական և կրոնական հաստատություններում, գիտական աշխատանք իրականացնելիս ընկերությանը

տեղեկացնել չի պահանջվում, պայմանով, որ նման գործունեությունը չի հակասում ընկերության շահերին:

6. Քաղաքական գործունեություն

14. Սույն կանոնների դրույթները որևէ կերպ չեն խոչընդոտում Խորհրդի անդամներին մասնակցելու քաղաքական գործընթացների կամ լինել կուսակցության անդամ, սակայն ընկերությունում աշխատելու ժամանակահատվածում Խորհրդի անդամները չեն կարող զբաղվել քաղաքական գործունեությամբ, որը կհակասի իրենց պարտականությունների կատարմանը կամ կարող է առաջացնել շահերի բախում:

7. Գործատու

15. Խորհրդի անդամին չի կարող հանձնարարվել որևէ պատասխանատու աշխատանք ընկերության գործունեության ցանկացած ոլորտում, որն առնչվում է կամ կարող է առնչվել Խորհրդի անդամի նախկին գործատուի հետ, տվյալ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների դադարումից 3 տարվա ընթացքում:

16. Խորհրդի անդամին չի կարող հանձնարարվել որևէ պատասխանատու աշխատանք ընկերության գործունեության ցանկացած ոլորտում, որը կարող է հակասել Խորհրդի անդամի առաջիկա կամ հնարավոր գործատուի շահերին: Եթե Խորհրդի անդամը ցանկանում է աշխատել ընկերությունից դուրս այլ գործատուի մոտ, կամ բանակցում է նման աշխատանքի վերաբերյալ կամ ստացել է առաջարկ, ապա Խորհրդի անդամը չի կարող իրականացնել որևէ գործառույթ, որն առնչվում է կամ կարող է առնչվել նման գործատուի հետ:

17. Սույն կանոնների 15-րդ և 16-րդ կետերում նկարագրված իրավիճակների առաջացման դեպքում խորհրդի անդամը այդ մասին հայտնում է ընկերության կորպորատիվ քարտուղարին:

18. Սույն կանոնների 15-րդ և 16-րդ կետերում նախատեսված սահմանափակումները չեն կիրառվում այն դեպքում, երբ նախորդ կամ հնարավոր գործատուն հանդիսանում է պետական մարմին:

7. Նվերներ, հատուկ ծառայություններ, պատվավոր կոչումներ և պարգևներ

19. Խորհրդի անդամները պետք է խուսափեն իրենց գործունեության հետ կապված որևէ ընկերության և անձի կողմից նվերներից, հատուկ ծառայություններից, պատվավոր կոչումներից և պարգևներից:

20. Սույն կոնոններ 19-րդ կետից բացառություն են կազմում՝

1) նվերները որոնք չեն գերազանցու 100000 ՀՀ դրամը.

2) ներկայացուցչական ծառայությունների ստացումը, պայմանով, որ դրանց ծավալը և արժեքը չի գերազանցում խելամիտ չափը:

21. Այն դեպքերում, երբ նվերից հրաժարվելը կարող է անհարման իրավիճակ ստեղծել ընկերության և այլ անձանց համար, կամ կարող է ընկալվել որպես վիրավորանք, խորհրդի անդամը կարող է ընդունել նվերը, պայմանով, որ այն հանձնվելու է ընկերությանը, բարեգործական նպատակներով օգտագործելու համար:

8. Ֆինանսական շահեր

22. Խորհրդի անդամներն իրենց հայեցողությամբ կարող են իրականացնել անձնական ֆինանսների կառավարում, պայմանով, որ այն՝

1) չի առաջացնի շահերի բախում.

2) չի սահմանափակի աշխատանքային պարտականությունները կատարելիս անկախ և անկողմնակալ գործելու հնարավորությունը:

9. Գաղտնիություն

23. Խորհրդի անդամները իրավունք չունեն բացահայտելու գաղտնի տեղեկատվությունը որևէ անձի, որը չունի նման տեղեկատվության տիրապետելու իրավասություն, այդ թվում՝ ընկերության աշխատակիցներին և իրենց ընտանիքի անդամներին: Սույն կարգավորումը չի տարածվում Խորհրդի անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման շրջանակում ընկերության բաժնետերերին գաղտնի տեղեկատվության բացահայտելու դեպքի վրա:

24. Խորհրդի անդամները իրավասու չեն, իրենց գործունեությամբ պայմանավորված տիրապետվող գաղտնի տեղեկատվությունն օգտագործել կամ փոխանցել այլ անձանց ուղղակի կամ անուղակի անձնական օգուտ ստանալու համար:

23. Սույն կանոնների 23-րդ և 24-րդ կետերում նախատեսված սահմանափակումները շարունակում են գործել նաև Խորհրդի անդամի լիազորությունների դադարումից հետո:

10. Ընկերության գույքը

24. Խորհրդի անդամները պետք է խնայեն և պահպանեն ընկերության ակտիվները և հետևեն որպեսզի դրանք օգտագործվեն նպատակային և բարեխղճորեն:

25. Ընկերության մտավոր սեփականությունը չպետք է օգտագործվի Խորհրդի անդամի կամ որևէ այլ անձի անձնական շահերի համար, բացառությամբ ընկերության կողմից օգտագործման թույլտվության առկայության դեպքում: